ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՄԽ-02

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության Մրցութային խորհրդի

Թիվ 2 նիստի

11-ը հոկտեմբեր 2024թ.

Ժամը 15:00

Ս.թ. հոկտեմբերի 11-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության Մրցութային խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 2-րդ նիստը, հետևյալ օրակարգով՝

Օրակարգ՝

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի փաստաթղթային փուլի ավարտի հաստատում, հայտերի հաստատում կամ մերժում
2. Հարցազրույցի անցկացման վայրի և ժամկետի սահմանում,
3. Հարցազույցի տևողության սահմանում և հավակնորդների հարցազրույցի փուլի հերթացուցակի սահմանում

Խորհրդի բոլոր հինգ անդամները մասնակցում էին նիստին: Նիստը վարում էր՝ Արթուր Հովսեփյանը:

Նիստին մասնակցում էր նաև ԱԺ աշխատակազմից Դիաննա Աթոյանը՝ նիստի արձանագրումն ապահովելու համար:

Օրակարգի 1-ին հարց	Ա.Ջուլհակյանը ներկայացրեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար հավակնորդների փաստաթղթերը, որը տրամադրվել էր մրցութային խորհրդին: Մրցույթի համար դիմել են հինգ հավակնորդ: Խորհուրդը ուսումնասիրեց հավակնորդներ Նարինե Ազարյանի, Տիգրան Բաբիկյանի, Ժիրայր Կարապետյանի, Արսեն Մանուկյանի, Արմեն Մարուխյանի հայտերը, ներկայացված փաթեթների ամբողջականության վերաբերյալ Խորհրդի անդամների կողմից դիտողություններ չեն եղել:
Խորհրդի որոշումը	*Խորհուրդը քվեարկությամբ որոշեց հաստատել մրցույթի փաստաթղթային փուլի ավարտը և հաստատեց հայտերը, ըստ որի մրցույթի հարցազրույցի փուլ են անցնում հավակնորդներ Նարինե Ազարյանը, Տիգրան Բաբիկյանը,*

	Ժիրայր Կարապետյանը, Արսեն Մանուկյանը, Արմեն Մարուխյանը: *Կողմ 5, դեմ 0*
Օրակարգի 2-րդ հարց	Քանի որ Խորհրդի նիստերի անցկացման վայրը օրենքով սահմանված է ԱԺ շենքը, ուստի առաջարկվեց հարցազրույցը անցկացնել ԱԺ վարչական շենքում: Հարցազրույցը առաջարկվեց անցկացնել բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն իրականացնելու նպատակով կատարված հարցումների պատասխանները ստանալուց հետո 14-օրյա ժամկետում:
	Խորհուրդը քվեարկությամբ որոշեց հարցազրույցը անցկացնել ԱԺ վարչական շենքում: Հարցազրույցը որոշվեց անցկացնել բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունը իրականացնելու նպատակով կատարված հարցումների պատասխանները ստանալուց հետո 14-օրյա ժամկետում: *Կողմ 5, դեմ 0*
Օրակարգի 3-րդ հարց	Առաջարկվեց յուրաքանչյուր հավակնորդի համար հարցազույցի տևողությունը սահմանել մեկուկես ժամ, իսկ հերթականությունը՝ ըստ դիմումները ներկայացնելու ժամանակագրության կամ այբբենական կարգով:
Խորհրդի որոշումը	*Խորհուրդը քվեարկությամբ որոշեց յուրաքանչյուր հավակնորդի համար հարցազույցի տևողությունը սահմանել մեկուկես ժամ, իսկ հերթականությունը՝ ըստ այբբենական կարգի:* *Կողմ 5, դեմ 0*

Նիստը վարող՝ Ա. Հովսեփյան

Նիստի քարտուղար՝ Դ.Աթոյան